XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№ 7 Երեքշաբթի, 17 Յունուարի

1883 – 1906

Երեքշաբթի, 17 Յունուարի № 7

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., հատը՝ 5 կ.:
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը:
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով:
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ: Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է:

1906

ՆՈՐ-ԴԱՐ

(ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Սոյն 1906 թուին լոյս կը տեսնի քաղաքական-գրական ամենօրեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ:

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., հատը՝ 5 կ.: Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ:

Յայտարարութիւններ ընդունւում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսումը 4 կ.: Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար մեծ զիջում:

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Գրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Норъ-Даръ“, կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor-Dar».

Ծանուցումն.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազարդ յաւելուած: Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կը ձեռնարկենք պատկերազարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 ռուբլի բաժանորդագնի հաշւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.— Հայոց Եկեղեցին և «Պոլոժենիէ»-ն:
ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ:
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս: Գաւառ: Ռուսիա:
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ:
Բագուի դէպքերից:
ՔԱՂԱՔԱԿԱՆ.— Չինական բանուորները Տրանսվաալում: Միացեալ Նահանգներն ու մարոկկեան խնդիրը:
ՀԵՌԱԳՐՆԵՐ,
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիֆլիս, 16 յունուարի 1906 թ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ «ՊՈԼՈԺԵՆԻԷ»-Ն

Ա.

Արևելքի ամենահին քրիստոնեայ եկեղեցիներից՝ Հայաստանեայց Եկեղեցին յայտնի է նրանով, որ ժողովրդական է. եկեղեցին ինքը ժողովուրդն է. քահանայից սկսած մինչև եկեղեցու պետը՝ ընտրում է ժողովուրդը, և եթէ եկեղեցու պետն իւր ստորադրեալների միջից ընտրութիւն է անում, այս կամ այն կարգադրութիւնն արձակում,—այդ նրա համար, որ նա՝ պետն ընտրուած է, իսկ ընտրողը Եկեղեցին է՝ ժողովուրդը: Ինքը ժողովուրդը կառավարում է Եկեղեցին, թոյլ է տալիս կառավարելու և իւր հոգևորականութեանը միմիայն այն հիման վրայ, որ այս վերջինիս գոյութիւնը և սկիզբը հիմնուած է ժողովրդի ազատ կամքի վրայ:

Այսպէս՝ Հայաստանեայց Եկեղեցու վերաբերմամբ, ով էլ որ լինի հաւատացեալը, վերջին աշխարհական հայից մինչև ամենայն հայոց Կաթողիկոսը՝ կարող են և պարտաւոր են գործել դոյն այդ Եկեղեցու օրէնքների և սրբագործուած աւանդութիւնների շրջանում, իսկ այդ (փոփոխելի) օրէնքները կարող են փոփոխութեան ենթարկուել միմիայն այն ճանապարհով, ինչ ճանապարհով որ դրանք սկիզբն են առել:

Հայաստանեայց Եկեղեցին անկախ է եղել և ինքնավար՝ հայոց թագաւորների օրով և քաղաքական ամենածանր ժամանակներում իսկ միշտ ճիգ է թափել պահպանելու իւր ազատութիւնը, իւր անկախութիւնը:

Ազատութեան ու անկախութեան ոգին այնքան զօրեղ է եղել Հայոց Եկեղեցու մէջ, որ հայաստանը կործանուելուց, հայութիւնը ցիր ու ցան լինելուց, հայ ազգը իւր քաղաքական անկախութիւնից իսպառ զրկուելուց յետոյ՝ մեր ազգային Եկեղեցին իւր մէջն է ամփոփել հայոց ազգութիւնը և ծառայել ու ծառայում է մինչև օրս իբրև հոգևոր զինարան ազգի գոյութեան պահպանման:

Հին դարերի և նորագոյն ժամանակի պատմութիւնն այդ է վկայում:

Երբ Կովկասը, դրա հետ և այդ երկրին կից Հայաստանի մի մասն անցաւ ռուսաց ձեռքը և մեր պապերը ռուսաց Կայսերական հպատակութիւն ընդունեցին, ռուսաց կառավարութեան այն ժամանակուայ ռեժիմը, որի փոփոխութիւնն այժմ է սպասւում, ճանաչեց Հայաստանեայց Եկեղեցու ինքնավարութիւնն և շնորհեց նոր հպատակ դառած հայոց ազգին «Պոլոժենիէ»-ն, որն իսկապէս մի պայմանագիր էր կառավարութեան և հայոց ազգի ներկայացուցիչ Կաթողիկոսի միջև կապուած, որով կառավարութիւնն ապահովեցնում էր Հայաստանեայց Եկեղեցու ինքնավարութիւնը, և այն՝ «Հայաստանեայց Եկեղեցու օրէնքների և սրբագործուած աւանդութիւնների» վրայ հիմնուած: Բանն այն է, որ այդ «Պոլոժենիէ»-ի մէջ իսկապէս Հայաստանեայց Եկեղեցու ինքնավարութիւնը սեղմուած է և այն աստիճանի, որ Եկեղեցու անկախ ոգին խեղդուած է քաղաքական այլ և այլ միտումներով:

Որ այդ այդպէս է— կարող է ամենամիամիտ ընթերցողն իսկ նկատել, երբ նա թերթելու լինի «Պոլոժենիէ»-ն, որի մէջ ընդունուած սկզբունքներին բոլորովին հակասում են մեր Եկեղեցու և նրա վարչութեան վերաբերեալ յօդուածներից շատերը:

Այսպէս, օրինակ, Կաթողիկոսը ճանաչուած է ամենայն հայոց (և՛ Թիւրքիայի, և՛ Պարսկաստանի և այլ տեղերի) Կաթողիկոս, ուրեմն պէտք է որ անձեռնմխելի լինի և գոնէ այն զօրութիւնն ունենայ, ինչ որ ունի մի դեսպան բայց նա այդ չունի: Կաթողիկոսին ընտրողը պէտք է ժողովուրդը լինի, և ընտրողները պէտք է ս. Էջմիածնի տաճարում երդուին... ընտրելու կաթողիկոս, բայց արի տես, Կաթողիկոսացուներ են ընտրում ձեւականութեան համար:

Ձեւականութիւն ենք ասում, որովհետև մինչև Մակար Կաթողիկոսը կառավարութիւնը լսելայն ընդունում էր ազգի ընտրածը, և ազգի պատգամաւորները ս. Էջմիածնում ընտրում էին Կաթողիկոս և ոչ կաթողիկոսական գահի համար կաթողիկոսացուներ:

Երբ կառավարութիւնը չլսուածին ճանաչեց, այդ օրից de facto խափանուեց հայոց Եկեղեցու ընտրողական իրաւունքը, ինչ որ de jure արդէն խափանուած էր «Պոլոժենիէ»-ով:

Այդ բռնութիւնը Եկեղեցու անկախութեան դէմ առաջ բերեց այն կեղծ և ըստ ամենայնի բարոյապէս ապականիչ այն դրութիւնը, որով պատգամաւորները ս. Էջմիածնում ստիպուած էին այնուհետև ոչ Կաթողիկոսացուներ ընտրել և ոչ Կաթողիկոս, թէպէտև ընտրութիւնից առաջ երդւում էին ընտրել Լուսաւորչի գահին արժանաւոր գահակալ:

Այսպէս՝ «Պոլոժենիէ»-ն պէտք է որ իւր մէջ ամփոփէր Հայաստանեայց Եկեղեցու ինքնավարութիւնը, բայց, ինչպէս ասացինք, քաղաքական միտումներից դրդուած, «Պոլոժենիէ»-ն կազմողները, գիտութիւնից թէ ագիտութիւնից, հայոց ազգին «Պոլոժենիէ»-ն շնորհելով իսկապէս կամեցել են սեղմել նրա մէջ Եկեղեցու ինքնավարութիւնը մինչ այն աստիճանի, որ նա կամաց-կամաց պէտք է որ մեռնէր:

Կամաց-կամաց աննկատ մեռցնելու պրոցեսին չկամեցաւ սպասել իշխան Գոլիցինը. նա մեր սեղմուած Եկեղեցուն վերջին հարուածը տալու փորձն արեց և ձեռնարկեց մի նոր «Պոլոժենիէ»-ի խմբագրութեան:

Բանն այն է, որ մեր պապերը յօժարակամ ռուսաց իշխանութեանը հպատակելով՝ «Պոլոժենիէ»-ն իւր մէջ պէտք է ամփոփէր իսկապէս ոչ միայն Հայոց Եկեղեցու ինքնավարութեան ապահովութիւնը, այլ և ուրիշ շատ բաներ, որոնց մասին Կովկասի այժմեան բնակչութիւնը տեղեկութիւն չունի:

Ա. Զ. Դ.

Այս անգամ կէս համարը լոյս տեսնում երեք գրաշարի վարմունքի շնորհիւ, որ վերջ ամիսներումս սովորական երևոյթ է դարձել: Այդ երեք գրաշարները խօսքով և գրաւոր պարտաւորուել են ոչ միայն իրենք շարելու թերթը այլ և ժամանակին և անընդհատ թերթի երեսները կապելու և մամուլի տակ դնելու: Դրանք գնացել են մի ուրիշ թերթի վրայ շարելու և մի խօսքով անգամ չեն յայտնել թէ, իրենք գնում են կամ չեն գալու առաւօտը:

Սոյն համարը կէս չափով լինելով Թիֆլիսում հատին պէտք է վճարել 3 կոպէկ:

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ

Երկուշաբթի, յուն. 16-ին, օրուայ ժամը 4-ին, քաղաքիս թրքական մասում սկսուեց հրացանաձգութիւն, և բնական էր, Մէյդանի և նրա շուրջը գտնուող փողոցներում մեծ իրարանցումն տեղի ունեցաւ: Կարծես յատուկ նշանով թաթարներն սկսեցին աներից և իրենց բռնած դիրքերից կրակել փողոցով անցնող հայերի վրայ Հայերն է. յանկարծակիի գալով շտապեցին փակել խանութները և կռուել յարձակուողների դէմ: Մանրամասնութիւնները չկարողանալով ստուգել, առ այժմ արձանագրում ենք ցաւալի իրողութիւնը. վիրաւորուած մի քանի հայերի փոխադրեցին կռուի վայրից: Սա ինչ է նշանակում:

Հայ-թրքական ընդհարումներին վերջ տալու միջոցների մասին խորհրդակցելու համար Արևելեան Անդրկովկասի հայ և թուրք բնակչութեան կողմից ընտրուած պատգամաւորների համաժողովը պէտք է գումարուէր կիրակի, յունվարի 15-ին Կովկասի փոխարքայի խորհրդին կից: Սակայն այդ գումարումը տեղի չունեցաւ թուրքերի մի նոր խորհրդաւոր քաղաքականութեան շնորհիւ, որի բանալին երևի շուտով կը գտնուի: Ահա թէ ինչ է հեռագրում մեր ընթերցողներին շատ լաւ ծանօթ Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիևը Բագուից Շէյխուլ Իսլամին. «Որովհետև շատ քաղաքների և գաւառների ներկայացուցիչների համար ներկայ պարագաներում անհնարին է հասնել Թիֆլիս, այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում մտադրուած ընդհանուր-կովկասեան համագումարը յետաձգել, մանաւանդ որ յունուարի 15-ին մուսուլմանների համաժողով է նշանակուած Պետերբուրգում, ուր չորեքշաբթի մեկնում են Բագուի ներկայացուցիչները»:

Թէ Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիևն ինչ կապ ունի կովկասեան հայ-թրքական համագումարի հետ և թէ Պետերբուրգում յունուարի 15-ին գումարուելիք մուսուլմանների համաժողովին Բագուից գնացող ներկայացուցիչներն ինչով պիտի խանգարէին փոխարքայի խորհրդին կից գումարուելիք համաժողովին,—սա մի շատ խորհրդաւոր պոլիտիկա է, որից լաւ հոտ չի գալիս, թէև մենք այդ համագումարին մի կոտրած գրոշի արժէք անգամ չենք տալիս, ինչպէս չենք տուել դրանից առաջ կազմուած խաղաղարար յանձնաժողովներին իրենց մասխարայական թափօրներով և համբոյրներով…

ԱՂԴԱՄԻՑ «Ռուս. գործ.»-ը հեռագրում է յունուարի 13-ից. «Գեներալ Գոլոշչապով երկրորդ անգամ ռմբակոծութեան ենթարկեց Խանաբադ հայ գիւղը: Հայերը կրակ տուին Ղաջար թուրք գիւղը»:

Շուշուց յունուարի 12-ից թուրքերէն «Իրշադ» լրագրին հաղորդում են. «Այժմ դրութիւնը մի քիչ լաւացել է. զօրքերի օգնութեամբ կենսական մթերքներ ենք ստանում: Ինչ կը լինի յետոյ, չգիտենք: Շրջակայքում խիստ կռիւ է կատարւում. երեկ հայերը յարձակում գործեցին Ղաջար թուրք մեծ գիւղի վրայ. մուսուլմաններից սպանուած է մի քանի հոգի. իսկ հայերը, թողնելով մեծ թւով սպանուածներ, նահանջ տուին»:

Այս հեռագրի տակ խմբագրութիւնը հետևեալ ծանօթութիւնն է տալիս. «Աղդամից և Շուշուց մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, Շուշու ամբողջ շրջանը դարձել է արիւնահեղ և անմիտ անցքերի վայր: Այստեղ հայերն են ոչնչացնում մուսուլման գիւղերը, այնտեղ մուսուլմանները—հայերինը: Ըստ հասած տեղեկութիւնների, հայեր տուել են մօտաւորապէս եօթն հարիւր զոհ, իսկ թուրքերը 400»:

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍ

Երկուշ. յուն. 16-ին, օրուայ ժամը 11-ն անց զինուորական շտաբի մեծաւոր գեներալ Գրեազնովի վրայ ռումբ ձգուեց, որի պայթումից վիրաւորուեց և մեռաւ ինքը գեներալը, վտանգաւոր վիրաւորուեց նրա կառապանը. վիրաւորուած է նոյնպէս գեներալի կազակը պայթումի միջոցին փողոցով անցնող մի կին նոյնպէս վիրաւորուած է և, ինչպէս ասում են, մի ուրիշը զրկուել է իւր կեանքից: Գեներալ Գրեազնովը դուրս է գալիս իւր բնակարանից, որ գտնւում է Բարեատինսկայա փողոցի վրայ Ալեքսանդրեան այգու դիմացը, և նստում է կառքը: Այդ միջոցին Ալեքսանդրեան այգուց, որ բաժանուած է փողոցից չուգունէ վանդակով, ռումբը ձգւում է: Վրայ հասնող կազակները և պոլիցիականները շրջապատում են այգին և ձերբակալում են ռումբ ձգողին, որ փախչում է եղել: Փողոցը մի առժամանակ զինուորականներով պատած մնաց: և անց ու դարձն արգելուեց: Ասում են, որ բռնուածը մի երիտասարդ է և իւր անունը չէ յայտնել. ասում են թէ նա համաձայնուել է ցոյց տալու թէ որտեղից ի ռումբը ստացել:

Ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետ գեն. Տիմոֆէևը յայտարարում է յունուարի 14-ից ի գիտութիւն Թիֆլիս քաղաքի բոլոր բնակիչների, որ անկարգութիւններ ծագած դէպքում, որոնց ճնշելու համար անհրաժեշտ կը դառնայ զօրքերի մասնակցութիւնը, այդպիսի անկարգութիւնները կը ճնշուեն վճռական խիստ եւ անխնայ կերպով: Առանձնապէս նախազգուշացնում եմ այս մասին բնակչութեան հայ և թուրք մասերին»—աւելացնում է ընդ.-նահանգապետը:

Վեհ. Կաթողիկոսն իւր անուանակոչութեան օրը, յունուարի 14-ին, ստացել է հետևեալ հեռագիրը Դերբենտից. «Երկու բարեկամ ազգութիւնների - հայերի և մուսուլմանների ներկայացուցիչները, շնորհաւորելով Ձերդ Սրբութեան անուանակոչութեան հանդիսաւոր օրը, աղօթում են Ամենաբարձրեալին, որ Ձեզ երկար տարիներ խաղաղ կեանք տայ և հայերի ու մուսուլմանների միջև խաղաղութիւն ու համերաշխութիւն ձգի, ինչ որ սրբութեամբ պահպանում են դերբենտցիները: Գործակալ Սպանդունի, Դերբենտի քաղաքային աւագ Հայդարով»:

— Վերայի կամուրջն այս տարի կապալով է տրուած Եգանեանին 25,605 ր.: Անցեալ տարի նա կամուրջը վերցրած ունէր 21,505 ր.:

— 6-րդ քաղաքամասում ապրող մուսուլմանները դիմել են քաղաքային վարչութեանը, խնդրելով որ կին-բժիշկ Շէյբէնինայի քաղաքային բուժարանը Դիդուբէից տեղափոխուի Պարփուխի մասը: Յիշեալ կին-բժիշկը նոյեմբերին հայ-թրքական ընդհարումների ժամանակ եռանդով գործում էր թուրքերի քաղաքամասում, բժշկական օգնութիւն հասցնելով մի քանի հարիւր վիրաւոր մուսուլմանների:

— Տղայոց առաջին գիմնազիոնում կիրակի, յունուարի 15-ին, բանուորների և նրանց իրաւունքի համար բացուելիք ձրի դասերն արգելուեցին:

— Վլ. Դարչիաշվիլի թոյլատուութիւն է խնդրում Թիֆլիսում հրատարակելու վրացերէն մի նոր թերթ «Ախալի Դրօ» («Նոր Ժամանակ») անունով:

— Թիֆլիսում կազմակերպւում է հրշէջների ազատ ընկերութիւն:

— Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն Թիֆլիսի հայոց թեմական առաջնորդին է ուղարկել այն տօների ցուցակը, երբ շրջաբերականի համաձայն, հայ աշակերտներն արձակւում են: Ընդսմին հոգաբարձուն խնդրում է յայտնել, թէ հայոց ուրիշ ո՞ր տօներին պէտք է աշակերտներին արձակել:

— Բժ. Վ. Արծրունու «Առողջապահիկ թերթը» դադարեցրել է իւր գոյութիւնը նիւթական սղութեան պատճառով:

— Յունուարի 11-ին Պետերբուրգից արագընթաց գնացքով Թիֆլիս վերադարձաւ Կովկասի ոստիկանութեան կառավարչի դիւանապետ Գուբինը:

ԳԱՒԱՌ

— Բաթումի շրջանի վրացի մահմեդականներից ութ հոգի պարգևատրուած են վզին և կրծքին կրելու համար ոսկեայ և արծաթեայ մեդալներով կառավարութեանը ցոյց տուած իրենց անձնուէր ծառայութեան համար:

—Միխայլովօ կայարանից փոխգնդապետ Ռեպրով յունուարի 14-ից զեկուցանում է հեռագրով, որ Միխայլովօ գիւղում ինքը գտել է պայթուցիկ հրանօթների գործարան: Յանցաւորները բացայայտուած են, բայց փախել են յեղափոխականների հետ: Բացայայտուած են նմանապէս գործադուլը սարքող և ուրիշ ոճրալի գործեր նիւթող կազմակերպութիւնները: Իսկ երկաթուղու ծառայողներից գլխաւոր գործիչները ձերբակալուած են: Կոմիտէի անձերն անյայտացել են միւս յեղափոխականների հետ: Ամեն միջոց ձեռք է առնուած նրանց գտնելու համար:

—Կովկասի քաղաքներում, գիւղաքաղաքներում և աւաններում անշարժ կայքերից սոյն 1906 թուին առնուելիք տուրքերը որոշուած են հետևեալ կերպով. Թիֆլիսի նահանգում 178000 Երևանի—38000ր., Քութայիսի—24000 ր., Գանձակի—38000 ր., Բագուի—130,000 ր., Սև ծովի—8000 ր., Կուբանի շրջանում—60,000 ր., Թերեքի 50,000 ր., Կարսի—9000 ր., Դաղըստանի—13000 ր. Բաթումի—56,000 ր., Զաքաթալի—1000 ր. և Սուխումի—4000: ր.,

ՌՈՒՍԻԱ

Համաձայն մայրաքաղաքի ռուս լրագրների հաղորդածի, Աստրախանում կազմուել է արքայականների բաւական խոշոր կուսակցութիւն: Նա իւր գործունէութիւնն առաջ է տանում շատ մեծ եռանդով և շրջակայ գաւառական քաղաքները կոչեր է ուղարկում կուսակցութեան ներքին ծրագրի հետ միասին:

— «Нов. Обоз.»-ի մէջ կարդում ենք հետևեալ մասնաւոր հեռագիրը. «Нов. Врем.»-ն հաղորդում է Ցուսիմայի կռուին մասնակցողներից մէկի հետ տեղի ունեցած խօսակցութիւնը: Մատնացոյց լինելով Ռոժեստվենսկու նաւատորմղի նաւաստիների ու սպաների պատերազմական յատկութիւնների վրայ, նա յայտարարել է, որ Ռոժեստվենսկին չի օգտուել իւր նաւատորմի առաւելութիւններից: Բացի խիստ կարգապահութիւնից, ծովակալի ու իւր նաւաստիների միջև ոչ մի կապ չի եղել: Փլագ-նաւապետը շատ անգամ վախենալիս է եղել Ռոժեստվենսկու սենեակը մտնելու զեկուցում տալու համար: «Суворовъ» նաւի վրայ ամենքը թագնուելիս են եղել, երբ ծովակալը տախտակամած էր դուրս գալիս. ազդարարները (сигнальщикъ) վախեցողում և մտածելու ամեն կարողութիւն կորցնում էին: Ծովակալը սովորութիւն չունէր ոչ ոքից խորհուրդ հարցնելու. նա սովոր էր միայն հրամաններ տալ: Զօրքը յարգանքի ոչ մի զգացում չէր տածում դէպի իւր հրամանատարը, այլ միայն վախենում էր նրանից: Նա մինչև անգամ նաւերի հրամանատարներին չէր յայտնել իւր գործունէութեան նախագիծը, այլ միայն ճակատամարտից առաջ աշխատել էր համախմբել բոլոր նաւերը: Այս բոլորի հետևանքն եղաւ այն, որ նաւատորմիղն ամբողջ երեք ժամ մնացել էր առանց հրամանատարի, մինչև որ ընդհանուր հրամանատարութիւնը յանձնուեց Նեբոգատովին: Միակ բանը, որ նաւատորմիղում կարգին էր, այդ ածուխի բեռնաւորութիւնն էր»:

— Խմիչքի կառավարական մենավաճառից 1904 թ. ստացուած հետևանքների մասին այս օրերս հրատարակուած տեղեկութիւններից երևում է, որ այդ տարուայ ընթացքում ոգելից խմիչքների սպառումն զգալի կերպով նուազել է: Համեմատութեամբ 1903 թ. ոգու գործածութիւնը նուազել է 406 հազար վեդրոյով, ընդհանուր մուտքը — 2,702,000 ր. իսկ զուտ շահը $6\frac{1}{2}$ միլիոն ռուբ. Այդ նուազումը գլխաւորապէս նկատւում կենտրոնական ու հարաւային նահանգներում և մայրաքաղաքներում:

— «Р. Вѣд.»-ն հաղորդում է, որ գրաֆ Վիտտէն կարգադրել է քննութեան ենթարկել Ուրալի պետական հանքային գործարանները: Այդ գործը յանձնուել է Դոնեց-Իւրևի մետալլագործական գործարանի նախագահ Վ. Դ. Բելովին, որը մօտ օրերս Պետերբուրգից ճանապարհ է ընկնում դէպի Ուրալ:

— 1904 թ. յուլիսի 1-ից մինչև

1905 յուլիսի 1-ը Թուրքիայից գաղթել է 184,682 հոգի, որից 92,380-ը հրեայ է,47, 224 հոգին լեհ և 17,649-ը —լիտուացի:

— Պետերբուրգի զինուորական շրջաններում խօսւում է, որ փետրուարի սկզբներում Պետերբուրգ է ժամանելու մանջուրական զօրքի ընդհանուր հրամանատար գեն.-ադիւտանտ Լինևիչը: Նրա գալը կապուած է Սիբիր երկաթ. գծի վրայ առաջացած անկարգութիւնների հետ: Նա Պետերբուրգում պէտք է մնայ մի քանի օր միայն և ներկայ գտնուի պետական պաշտպանութեան խորհրդի արտակարգ ժողովներին, ուր խորհրդածութեան է առնուելու, թէ ինչ ընթացք բռնել դէպի մանջուրական զօրքը: Զինուորական շրջաններում գլխաւորաբար այն կարծիքն է տիրում, թէ այդ զօրքը մի տարի ևս պէտք է թողնել իւր գտնուած վայրերում, իսկ ուրիշները կարծում են, որ նրանց հարկաւոր է մաս առ մաս փոխարինել յեղափոխական շարժումից ազատ մնացած տեղերից հաւաքուած զօրքերով:

— Շնորհիւ բարձրադիր պաշտօնատար անձերի պաշտօնից հեռացնելու և նրանց Պետական Խորհրդի անդամ նշանակելու, վերջինիս անդամների թիւն արդէն այժմ հասնում է 100-ի: Ներկայ յունուար ամսից սկսած, Պետական Խորհրդի 1906 թ. նախահաշիւը համեմատութեամբ նախորդ տարիների համարեա կրկնապատկուած է և հասնում է 1.600,000-ի ռուբ. («Бак. Ж.»):

— Պետերբուրգի ակցիզային շրջաններից մէկի ծառայողները վերջին օրերս պատահմամբ հաւաքւում են իրենցից մէկի մօտ: Խօսք է բացւում զանազան քաղաքական կուսակցութիւնների մասին: Ծառայողներից մէկը, տիկին Ա.-ն, իւր խօսակցութեան ընթացքում յայտնում է, որ ինքը ոչ մի կուսակցութեան չէ պատկանում, բայց և այդպէս համակրում է ազատագրական շարժումը: Մի քանի օր անցնելուց յետոյ, երբ վերոյիշեալ տիկինը ծառայութեան է գնում, նրան յայտնում են, որ ինքը շրջանի կառավարչի կարգադրութեամբ պաշտօնից արձակուած իւր ունեցած քաղաքական համոզմունքների պատճառով: Ա.-ն պարտաւորւում է պաշտօնից հեռանալ, որովհետև յետ ընդունելու վերաբերմամբ նրա արած դիմումները մնում են անհետեւանք: («Нов.»)

— Լեհական մի թերթ, հաստատ աղբիւրներից տեղեկանալով, հաղորդում է, որ Լեհաստանի 10 նահանգներից Պետական Դումային մասնակցելու են ընդամենը 6 պատգամաւոր:

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Ռուսական յեղափոխութեան այս ամենաեռուն շրջանում, երբ իւրաքանչիւր կուսակցութիւն, մամուլի ամեն մի օրգան աշխատում է իւր հայեացքներն հրապարակ հանել մեր շուրջը կատարուող նշանաւոր անցքերի մասին, անհետաքրքրական չի լինիլ «Նոր-Դար»-ի ընթերցողներին տեղեկանալ թէ ինչ կարծիքի է ռուսական մեծ ծերունին —Լ. Տոլստոյը, Ռուսիան հիմքից ցնցող ներկայ անցքերի մասին: Ուստի առաջն ենք բերում «Нов. Вр.»-ի մէջ նորերս լոյս տեսած նրա մի նամակը, որ գրել է իւր որդուն:

Հէնց այժմս ստացայ քո նամակը և անմիջապէս շտապում եմ պատասխանել քեզ: Այն ամենը, ինչ որ դու գրում ես, քիչ շատ ինձ արդէն ծանօթ է, սակայն դու այնքան գեղեցիկ ես նկարագրում, որ ես աւելի ևս զօրեղ կերպով զգացի մեր հասարակութեան բարոյական անկման աստիճանը:

Ներկայումս դրութիւնն արտաքուստ փոխուել է, սակայն այդ փոփոխութիւնը առաջ է բերուած արտաքին միջոցներով, և մարդկանց զգացած կատաղութիւնը նոյնպէս սոսկալի է:

Ես լրագիր չեմ կարդում, սակայն, ակամայ, անցորդների ու այցելուների պատմածներից տեղեկացել եմ այն ամենը, ինչ որ կատարւում է, և չեմ կարողանում ինքս ինձ զսպել չարտայայտելու յեղափոխութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող իմ գաղափարներս, որով գրեցի «Դարավերջը» (конець вѣка) յօդուածս, և նա սրանից երկու շաբաթ առաջ լոյս է տեսել արտասահմանում:

Այն, ինչ որ բոլոր մարդկանց դրութիւնը կը բարելաւէ, այդ կարող է իւրաքանչիւր մարդու դրութեան բարելաւումը միայն, ինչպէս մի կաթսայ ջուրը տաքացնելու համար հարկաւոր է, որ ջրի ամեն մի կաթիլը տաքանայ, և այդ այնպիսի մի ճշմարտութիւն է, որ հարկ չկայ մինչև իսկ կրկնելու որովհետև ոչ ոք ոչ մի ժամանակ չի էլ հակառակում դրա դէմ: Մինչդեռ խոստովանելով այդ, իւրաքանչիւր ոք ասում է. անշուշտ, բայց և այնպէս նա շարունակում է խօսել ու գործել իւր յիմարութիւններն ու կեղտոտութիւնները, առանց հասկանալու այն հանգամանքը, որ այդ ամբողջ հասարակական գործունէութիւնը ոչ միայն ոչ մի ժամանակ չի նպաստել մարդկանց վիճակի բարւոքուելուն, հապա ընդհակառակն ամենաճիշտ ու վճռական կերպով վատթարացնում է այն: Վատթարացնում է նրանով, որ ահա, ինչպէս տեսնում ենք, սոսկալի չափերով նսեմացնում է նրա ընդհանուր բարոյական մակերևոյթը: Իսկ բարոյական մակերևոյթի ստորացումն օգնակար ու նպաստաւոր է բոլոր անբարոյական մարդկանց, հէնց այդ պատճառով, որքան մարդիկ անբարոյական են, այնքան աւելի մեծ եռանդով են զբաղւում հասարական յեղաշրջում առաջ բերելով:

Ուրեմն, ինչ անել:

Անկրօն մարդիկ վատթարագոյն բան չէին կարող անել, քան այն, ինչ որ անում են — յարել, այս կամ այն կուսակցութեան կառչելու, թշնամանալու ու կռուելու նպատակով:

Իսկ կրօնասէր մարդկանց պարտքն է գտնել իրենց կեանքից, աշխատել դէպի Աստուած ունեցած իրենց պարտաւորութիւնները կատարելու, իսկ այդ պարտականութիւնների մէջ մտնում են՝ գութ ունենալ մարդկանց վրայ, սիրել նրանց, օգնել նրանց ինչով որ կարելի է, իսկ կազմել այս կամ այն Դումա, և կամ հիմնադիր ժողով և դրանց նման ուրիշ շատ յիմարութիւններ— ոչ երբէք:

Որ այդ այդպէս է, կարելի է համոզուել այն բանով, որ հէնց որ սկսում ես զբաղուել արտաքին պայմաններով, բացի այն, որ մոլորւում ու կորչում ես, նոյն իսկ ինքդ էլ չես կարողանում հասկանալ, թէ որն է օգտակարն ու որը վնասակար և մարդկանց ու քո միջև սողոսկում են թշնամական յարաբերութիւններ: Իսկ երբ մտածում ես առ Աստուած ունեցած քո պարտականութիւնների վրայ, ամեն բան պարզւում [illegible] է և ամենևին արգելքների չես հանդիպում, բացի այն, որոնք արդէն քո մէջն կան, և որոնց հէնց այդ պատճառով [illegible] է յաղթել, և ոչ միայն դէպի մարդիկ ոչ մի թշնամութիւն չես մտածում, ընդհակառակը, դէպի նրանց զգում ես մի առանձին սէր և աշխատում ես աւելի ևս արծարծել այն քո մէջ:

Ուստի, մի բան եմ միայն ցանկանում քեզ և բոլոր մարդկանց. այդ այն է, որ առանց կրօնի մարդիկ չար, զազրելի ու թշուառ էակներ են, և որ ամենակարևորն է մարդու համար, այդ այն է, որ եթէ կրօնը գոյութիւն չունի մարդու մէջ, նա գոնէ պէտք է իւր համար կրօնական յարաբերութիւններ մշակի դէպի կեանքը և նրանց հիմունքների վրայ հաստատուած միայն վերաբերուի կեանքի առաջացրած բոլոր երևոյթներին: Դրա անհրաժեշտութիւնը մանաւանդ [illegible] զգացւում է մեր այս օրերում: Շատ շատ մեծ է խորհուրդս քեզ այդ մասին:

ԲԱԳՈՒԻ ԴԵՊՔԵՐԻՑ

(Յեղափոխական օրերը Բագւում, դեկտեմբեր 11-ից մինչև վերջը)

Սոց.-դեմոկրատները տեխնիքական ընկերութեան դահլիճում բազմամարդ միտինգ էին գումարել: Ներկայ էր մօտ 3,000 հոգի:

Նախօրօք ժողով կազմակերպողները թոյլտուութիւն էին խնդրել ընդհանուր նահանգապետ գեն. Ֆադէևից, որն և թոյլատրել ժողովը: Սակայն հազիւ երկու ժամ էր անցել և ժողովականները դեռ մի որոշ վճռի չէին հասել, —յանկարծ շփոթ առաջացաւ ժողովականների մէջ: Պարզուեց, որ ժողովի շէնութիւնը շրջապատել են նախ կազակները, ապա և զինուորները:

Շփոթն ու երկիւղը կատարեալ էին մանաւանդ լսուել էր, որ Մոսկուայում սոց.-դեմ. մի նման միտինգ 12000 հոգուց բաղկացած՝ շրջապատել և սրի էին անցկացրել:

Ժողովի նախագահը մի կարճ ճառով հանգստացրեց ժողովականներին, աւելացնելով որ ինքը մտադիր է, եթէ ժողովականները ցանկանում են, գնալ նահանգապետի մօտ և բացատրութիւն պահանջել, թէ ինչու նախ թոյլատրում է միտինգը, ապա շրջապատել տալիս:

Նախագահն ընդհանուրի համաձայնութիւնը ստանալով գնաց նահանգապետի մօտ:

Ժողովին մասնակցում էին, ինչպէս ասացի, մօտ 3000 հոգի, որոնց մեծ մասը ռուսներ էին, փոքր մասը հայեր, վրացիներ, հրեաներ և քիչ էլ թուրքեր:

Րոպէները կրիտիքական էին. կազակները հրացաններն ուղղել էին ժողովի դահլիճի լուսամուտներին և սպասում էին նշանի:

Նախագահի գնալուց յետոյ տեղապահ նշանակուեց իւր օգնականը:

Ժողովականներից մի քանիսը հարց տուին, որ եթէ նահանգապետն առաջարկէ զինաթափ լինել, ապա և ցրուել,—պէտք է արդեօք զինաթափ լինել թէ՞ ընդդիմանալ:

Ժողովականները միաձայն վճռեցին—մնալ, բայց զինաթափ չլինել:

Այս սկսուեց վիճաբանութիւն Դաշնակցական և Հնչակեան կուսակցութեան պատկանող երիտասարդների միջև: Վիճաբանութեան բուն նպատակը մութն էր. միայն փայլում էր հայերին յատուկ մի սև «եռ», որի մասին ապագայում կը խօսենք:

Նահանգապետի մօտ գնացած նախագահը չէր վերադառնում:

Կրիտիկական րոպէներն աւելի ծանրանում էին: Ժողովականներն սկսեցին դրդուել նոր պատգամաւորներ ընտրելու և նահանգապետի մօտ ուղարկելու խնդրով:

Ընտրուեցին երկու հոգի—պ. պ. Խատիսով և Եակովլև:

«Եթէ սրանք ևս չվերադարձան, ինչպէս նախագահը, այն ժամանակ պարզ պիտի լինի, որ նահանգապետի մօտ գնացած ներկայացուցիչները ձերբակալուած են հետևաբար և մենք՝ ժողովականներս էլ վտանգի մէջ ենք գտնւում»—որոշեցին ժողովականները, ճանապարհ դնելով երկրորդ պատգամաւորութիւնը:

Մինչ Խատիսովը և Եկովլևը նոր էին գնացել, ժողովի դահլիճը մտաւ Սալեանեան գնդի սպաներից մէկը [illegible]:

— Թոյլ [illegible]նը,—ասաց սպան նախագահի պաշտօնակատարին: — Միթէ զգեցիկ բան է, պարոններ, երբ ես ինձ համար անցնում եմ փողոցով, բայց ինձ վրայ են յարձակւում մարդիկ և ուզում են սպանել: Ձեզ ես աւելի եմ յարգում ձեր սկզբունքը, քան ինձ վրայ յարձակուողները...»:

Երբ սպան իւր խօսքը վերջացրեց, արդէն մեզ համար պարզուեց, որ քաղաքում, ժողովրդի մէջ յուզմունք է տիրում. ուստի և աւելի ծանրացաւ մեր դրութիւնը: Քիչ յետոյ լուր հասաւ, որ մի քանի հազար բանուորներ արդէն շրջապատող զօրքերի շուրջը դիրքեր են բռնել, որպէս զի, եթէ ժողովականներին վտանգ սպառնալիս լինի, զօրքի վրայ յարձակուեն:

Վերջապէս եկան նահանգապետի մօտ գնացած նախագահը և երկու պատգամաւորները: Նրանք յայտնեցին, որ ժողովականները կարող են հեռանալ առանց զինաթափ լինելու: Սակայն, բոլորը պահանջեցին, որ նախ կազակները հեռանան, փողոցն ազատեն զօրքից, ապա իրենք դուրս գնան, որպէս զի իրար չհանդիպեն:

Դեռ կազակները չհեռացած, ժողովականներից մի քանիսն սկսեցին քննադատել նահանգապետի վարմունքը, որ նա նախ թոյլատրում է ժողով գումարել, ապա շրջապատում է զօրքով:

Ոստիկանապետը, որ այդ ժամանակ ներկայ էր, մատիտը և թուղթը վերցնելով, խնդրեց նախագահի և քարտուղարի ազգանունը:

Ժողովականներն աղմուկ հանեցին, չկամեցան յայտնել և ուզում էին ոստիկանապետին ցած գլորել: Սակայն նախագահն աղմուկը նախ խաղաղեցրեց ապա սառնասիրտ կերպով յայտնեց իւր անունն ու ազգանունը: Երբ հերթը հասաւ քարտուղարին, որը մի ուսանող երիտասարդ էր, նա ասաց.—Ես, պարոն ոստիկանապետ, ամենաթունդ սոցիալիստ եմ, և ահա իմ ազգանունս:

Ասաց և ազգանունը տուեց:

Կազակները հեռացան, հեռացաւ և զօրքը: Դուրս եկան և 4—5 հարիւր հոգի ժողովականներից: Մնացեալ ժողովականներից մի քանիսը դահլիճի դուռը ծածկելով դիմեցին նախագահին հետևեալ խօսքերով. «Պ. նախագահ, մի քանի հարիւր հոգի արդէն դուրս գնացին, բայց մեզ յայտնի չէ՝ արդեօք դրանք իրենց տունը՞ են գնում, թէ՞ փողոցում ձերբակալւում են: Խնդրում ենք, նախ դուք դուրս եկէք, աջ ու ձախ փողոցներով անցէք, ապա մեզ լուր բերէք, տեսնենք մեր ընկերներն անվտանգ են գնում»:

Նախագահը քարտուղարի հետ դուրս գնաց. 10 րոպէից յետոյ նա վերադարձաւ և ասաց, որ վտանգ չկայ. դրանից յետոյ միայն մնացած ժողովականները դուրս եկան և ցրուեցին:

Կառավարութիւնը նորից երկաթուղիների կայարանը իւր ձեռքը ձգեց: Յեղափոխականները թոյլ դիմադրութիւն անգամ ցոյց չտուին:

Ժողովրդի մէջ յեղափոխականների անունն ընկաւ, ուստի վերջիններս անմիջապէս ժողով գումարեցին և վճռեցին զինուած յարձակում գործել կայարանի վրայ, որը շրջապատուած էր և պաշտպանւում էր զօրքով: Սակայն այդ վճիռը լոկ վճիռ մնաց.....

Հասաւ դեկտեմբերի 15-ը. քաղաքում յամառ կերպով լուր տարածուեց, որ խուլիգանները կազակների հետ միասին պիտի կոտորեն ու կողոպտեն հրեաներին և այրեն նրանց բնակարանները: Առաւօտեան ժամը 6. 7-ին, երբ դեռ նոր էր լոյսը բացւում, հրեաները սկսեցին ապահով տեղ փնտրել իրենց համար:

Մի մասն ապաստան գտաւ երկաթուղու կայարանում, միւսը սև քաղաքի իրենց բարեկամների ու ծանօթների տանը, երրորդ մասը շոգենաւերի մէջ ծովի վրայ:

Ծննդեան օրը (25-ին) խաղաղ անցաւ, բայց տարածուեցին լուրեր թէ հրեաներին հայերը պիտի ջարդ տան: Հրեաները հասկացան, որ այդ լուրը շինովի է, ուստի հայերի վստահ լինելով դեկտեմբերի 27-ին վերադարձան իրենց բնակարանները:

Այդ միջոցին Բալախանսկայա փողոցում վիրաւորուեց մի թուրք, արբած դրութեան մէջ. վիրաւորուածը ոստիկանութեանը յայտնեց, որ ինքը ճանաչում է վիրաւորողին և ձերբակալել տուեց գանձակցի Ռուբէն անունով մի հայ երիտասարդի:

Այդ դէպքի վրայ լուր տարածուեց, իբր թէ հրեաները հայերից և թուրքերից մարդիկ են կաշառել, որպէս զի հայը թուրքը վիրաւորի, իսկ վերջինս հայ և այդպիսով նորից հայ-թրքական կոտորած առաջ գայ, ու դրանով հրեաների ջարդը մոռացուի: Մենք չենք ուզում հաւատալ այդ լուրերին:

Փառու

---

*) Տես «Նոր-Դար» № 6.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Չինական բանուորները Տրանսվաալում.—Չինական բանուորների Տրանսվաալ ներմուծելու հարցը ժամանակին ընդարձակ վիճաբանութիւնների և յարձակումների տեղիք է տուել անգլիական պարլամենտում նրա անցեալ պահպանողական կաբինետի դէմ: Լիբերալները խիստ բողոքում էին մի քանի տարուայ պայմանագրութեամբ չինական բանուորներին Տրանսվաալ փոխադրելու դէմ, տեսնելով դրա մէջ մի տեսակ քողարկուած ճորտութիւն: «Times» թերթը, վերադառնալով այդ միևնոյն խնդրին, այս օրերս տպել է Յովհաննէսբուրգից գրած իւր մի թղթակցի երկար նամակը, որի մէջ նա յայտնում է, որ Տրանսվաալի հանքային պալատի հրատարակած մեմորանդումի համաձայն ապացուցւում է, թէ հարաւ-աֆրիկեան գաղթականութիւններում ոսկու հանքերի շահագործութիւնն ուղղակի կախումն ունի չինացի բանուորներից: Տեղական բանուորների թիւը չի կարող մօտակայ տարիներում աւելանալ, և դրանց թիւն այս րոպէիս հասնում է 80,000-ի: Այդ մեմորանդումի մէջ ասուած է, որ եթէ չինացի բանուորների գաղթումն արգելուի և միևնոյն ժամանակ գաղթականութիւնների մէջ գտնուածներն ու այնտեղ հասնելիքներն ևս յետ դարձնեն, —այդ ընթացքը սաստիկ մեծ դժուարութեան մէջ կդնի երկրի տնտեսութիւնը: Դրա պատճառով 3135 հոր հարկադրուած են իրենց աշխատանքները դադարեցնել, և հարկ կլինի 6,045 ճերմակամորթ աշխատաւորների ճանապարհ դնել, այդպիսով աշխատանքի վարձատրութիւնը մօտաւորապէս 40 տոկոս պէտք է նուազի:

Ազատամիտների օրգան «Tribune» թերթը, շօշափելով այդ միևնոյն խնդիրը, յայտարարում է, թէ հարաւ-աֆրիկեան հանքերի տէրերը պարտաւորուած պէտք է լինեն իրենց շահագործելու եղանակը փոխելու, որովհետև նոր կաբինետը չի կարող թոյլ տալ այն զեղծումները, որոնք կատարւում էին անցեալում: Ուստի, —աւելացնում է լրագիրը, — եթէ Տրանսվաալի հանքերի շահագործումը չի կարող առաջ տարուել առանց չինական բանուորների, այն ժամանակ նրանց տեղափոխութիւնը հարկաւոր է դնել տարբեր, առաւել բարեխիղճ պայմանների մէջ:

Միացեալ-Նահանգները ու մարոկկեան խնդիրը.— Մարոկկեան խնդիրը վերջին ժամանակներս ստացած իւր սուր կերպարանքով նուազ մտահոգութիւն չէ պատճառում այն տէրութիւններին, որոնք անմիջապէս շահագրգռուած են դրանում:

Սենատը հանգստացնելու նպատակով, Ամերիկեան մինիստր Ռուտը սենատի անդամներին բացատրութիւններ տուեց մարոկկեան կոնֆերենցիային մասնակցող Միացեալ-Նահանգների ներկայացուցչին ուղարկուած հեռագրների մասին: Այդ հեռագրներից երևում է, որ Միացեալ-Նահանգներն ուրիշ բան չեն պահանջում, եթէ ոչ միւս պետութիւններին հաւասար առևտրական իրաւունքների պահպանումը:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

16 յունուարի

ԼՈՆԴՈՆ.—15 յունուարի «Դէյլի Տելեգրաֆ»-ի մէջ տպուած է թղթակցի խօսակցութիւնը գրաֆ Վիտտէի հետ, որն ասել է հետևեալը.—«Հազիւ թէ երբ և իցէ պետական գործիչը ենթարկուել է այնքան խիստ յարձակմանց ամեն կողմից, ինչպէս ես: Յարձակւում են ոչ թէ միայն իմ սեպհական մտածողութեանցս վրայ, այլ և բոլորովին հակառակ հայեացքների վրայ, որոնք չգիտեմ, թէ ինչու, ինձ են վերագրուած: Բոլոր պետական անձինք համախոհների կուսակցութիւն են ունեցել, ես միայնակ բացառութիւն եմ կազմում: Ռուսաց բոլոր թէ ծայրայեղ և թէ չափաւոր կուսակցութիւնները քննադատում են այն, ինչ որ համարում են իմ քաղաքականութիւնը: Թւում է, որ եթէ ես մի հասարակ բազմապատկութիւն կատարեմ, այն դէպքումն էլ կը գտնուեն մարդիկ, որոնք ինձ հակառակ կը ձգնեն ապացուցանել, որ չորս անգամ հինգը քսան չէ: Ընթացիկ հարցերը վճռելու իմ առաջարկած միջոցներն անդադրում անպէտք են համարւում: Կարգապահական կուսակցութիւնները խուսափում են ինձնից, որ փորձ եմ անում բուժել հայրենիքիս վէրքերը: Նրանց յարձակումները տպաւորութիւն չեն գործում ինձ վրայ, բայց ցաւալի է տեսնել թէ որքան քիչ է այն մշակների թիւը, որոնք սպասում են երկրի վերածնութեանը ոչ թէ արմատական միջոցներով ու ծրագրներով, այլ տոկուն, յամառ աշխատութեամբ: Ցաւս անիմ, որ այդպիսի գործիչներ դեռ հանդէս կը գան: Ես կը հրճուէի, եթէ Թագաւորն ազատէր ինձ պարտաւորութիւններիցս, իսկ եթէ Թագաւորն այդ չէ բարեհաճում, ապա ես շարունակում եմ պաշտօնս: Գիտակցելով իմ պարտքը Թագաւորի և հայրենիքի առաջ, վարուելով ամեն բանում իմ խղճիս համաձայն և պարգև սպասելով միմիայն իմ խղճից, ես աշխատում եմ իրագործել Թագաւորի կամքով նախագծուած միջոցները: Շարունակելով հաւատարիմ լինել հոկտեմբերի 17-ին արտայայտած հայեացքներիս, որոնք իմ քաղաքականութեան մայրն ու քըն են կազմում, ես հաստատ հաւատացած եմ ազգային շրջափոխութեանը (էվոլիւցիա), բայց ոչ ամեն բան գլխի վայր գնող յեղափոխութեանը: Յեղափոխականները կամենում են նմանել ձեռնածու-ֆակիրներին, որոնց ձեռքին բոյսն աճում է սերմից մի քանի րոպէում, մոռանալով ընդ նմին որ բոյսն այդպէս արագ էլ փչանում է: Մեր ժողովրդին անհրաժեշտ է անդորրութեան, աշխատանքի և նոր հիմնարկութեանց զգուշաւոր յարմարեցնելուն ժողովրդական պահանջներին: Թագաւորն ինքնայօժար կամքով շնորհեց ազատութեանց հիմունքները: Այժմ ժողովուրդը պէտք է արդարացնի այդ վեհանձն հաւատարմութիւնը: Ես ոչ մի զոհաբերութիւն չեմ խնայել իրագործելու մանիֆեստը, բայց եթէ անգամ իրաւունք էլ ունենայի, այն ժամանակ էլ չէի ընդլայնել Թագաւորի տուած ազատութեան սահմանները մի նշանակեց անգամ, այլապէս ես աններելի մեղք կը գործէի պետութեան առաջ: Իմ նախագուշակութեան համաձայն յեղափոխական քարոզն անյաջողութիւն կրեց, զօրքը հաւատարիմ մնաց Թագաւորին: Երբ կարգը վերականգնելու համար անհրաժեշտ համարուեցին ծայրայեղ միջոցներ, ես չհեռացայ ասպարիզից, որովհետև անցքերը յաջորդում էին իրար կայծակի արագութեամբ: Ապստամբութիւնն ճնշելու անհրաժեշտութիւնը միջոց չտուեց յարմարաւոր անձանց ընտրութեան: Մենք մնացինք մեր տեղերը և կատարեցինք մեր պարտքը: Աստծուն է միայն յայտնի, որ այդ ամենածանր պարտքն էր, որպիսին երբ և իցէ պէտք է եղել ինձ կատարելու: Զինուորական ույժի գործ դնելն անխուսափելի էր: Եթէ իշխանութիւնը խռովութեան րոպէներին տատանուէր, ապա դրա ճնշելը հարիւր անգամ աւելի զոհեր կը պահանջէր: Իսկ պատասխանատուութիւնն այն բանի, թէ ինչու 17-ի ազատութիւնը ցարդ չէ իրականացած, ընկնում է ոչ թէ կառավարութեան, այլ հասարակաց տարրերի վրայ, որոնք ապարդիւն կերպով ի չարն էին գործ դնում ամեն մի ազատութիւն: Ֆինանսներին գալով՝ մի որոշ չափով նուազեցին երեք սպառնացող գործօններ՝—պատերազմական ծախքերի բազմման կանխաւորելը, զինեալ ապստամբութեան ազդեցութիւնը և դրամատոմսերի նուազեցնելու սպեկուլացիայի շահախնդրութիւնը: Այժմ գլխաւոր արգելքը երևան բերելու ռուսաց ֆինանսների կանոնաւորութիւնն հանդիսանում է միջազգային գրգռման մթնոլորտը, որն առաջ է եկել բոլորովին անհիմն երկիւղով Մարոկկոյի խնդրի պատճառով: Քաղաքական այս միրաժը շուտով կանհետանայ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Այսօր վերացուեց զինուորական պահպանութիւնը: Գլխաւոր պատասխանատու պաշտօնեաների կազմը լրիւ լինելով՝ բոլոր գործողութիւնները կատարւում են կանոնաւորապէս:

ԿԻՇԻՆԵՒ.—«Бес. Жизнь»-ի տպարանը խուզարկելուց ու կնքելուց յետոյ կալանաւորուած է խմբագիր-հրատարակիչ Զախարովը. հետզհետէ կալանաւորւում են խմբագրութեան անդամները:

ՀՌՈՄ.— Լրագրների ասելով, պապը դիմել է լեհացիներին մի ուրիշ նամակով, որի մէջ բացատրում է 1905 թ. հոկտեմբերի 30-ին գրած առաջին նամակի մի քանի կէտերը, որոնք դժգոհութիւն էին յարուցել Լեհաստանում, և հաւատացնում է, թէ ինքը չի էլ մտածել սահմանափակելու ազգային կեանքը Լեհաստանում, ընդհակառակն ուզում էր քաջալերել լեհացիների քաջութիւնը և դէպի ազգային կեանքը ցոյց տուած նրանց ձգտումը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Լև Նիկոլայևիչ Տոլստոյ վերջացնում է ներկայ կեանքից վերցրած իւր մի նոր մեծ երկը «Столпотвореніе» վերնագրով:

Պետերբուրգ հասան Սիբիրի թափառական ցեղերի պատգամաւորութեան անդամները Վիտտէին խնդրամատոյց լինելու, որ վերացուի թափառական կեանքն արգելող օրէնքը:

Բալթիկեան երկաթուղու ինժեներներին պաշտօնապէս յայտարարուած է, որ գործադուլին մասնակցողներն արձակւում են նոյեմբերի 15-ից սկսած:

ՌԻԳԱ.—Խուզարկութիւնները նշանաւոր հետևանքներ ունեցան: Բռնուած է ռազմական խմբի մօտ 30 անդամ, դրանց թւում երկու խմբերի գլխաւորներ, բոլորն էլ լատիշներ: Նահանգի գաւառներում կարգը գրեթէ ամեն տեղ վերականգնած է: Գեներալ Ալլովը Ռիգային մօտենալով յետ դարձրեց Պսկով [illegible] գրաֆ Գրաբէի զօրքի մի մասը: Հրացանի են բռնուած հինգ ագիտատորներ Կուրլանդիայի նահանգում: Արշաւանքը վերջանում է եռանդով և աջողութեամբ: Սպանուած են 6 ագիտատորներ փախչել փորձելիս:

ՔՈՒԹԱՅԻՍ.—Յեղափոխական շարժումը գործադուլների ժամանակ արտայայտուեց նրանով, որ քարուքանդ էին անում գաւառական վարչութիւնները, զինաթափ էին անում ըստրաժնիկներին, կազմակերպում էին ժողովրդական միլիցիա. Դվիրբիլում և Բելոգորում գտնուած վաշտերը զինաթափ էին արուած: Բնակչութիւնն սպանել է մի սպայ և երկու զինուոր, վիրաւորուած են երեքը: Սոցիալ-դեմոկրատները պետական գանձատնից յափշտակել էին 100,000 ռ.: Յունուարի 8-ին եկան զինուորական երկու գնդեր. [illegible] նորոգուեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Բացուեց Մոսկուայի, Վարշաւի, Կիևի, Օդեսայի, Խարկովի, Կազանի, Իւրևի, Եկատերինոսլաւի, Եարոսլաւի, Տոմսկի բարձրագոյն դպրոցների ճեմարանական միութեան պատուիրակների երրորդ համաժողովը վճռելու համար երկրորդ կիսամեակին համալսարանները բանալու հնարաւորութեան խնդիրը:

ՀՈՄԷԼ.— Այրուեց քաղաքի կեդրոնական մասը: Ոչնչացած և թալանուած են ամենալաւ խանութները և հիւրանոցավայրի կէսը:

ՄՈՍԿՈՒԱ. — Քաղաքային գործերի առանձին ատեանը փոխեց քաղաքային խորհրդի այն որոշումը, որով պիտի խնդրուէր Թագաւորին Սևաստոպոլի նաւաստիների վճիռը թեթևացնել և Ռուսիայում մահուան պատիժը վերացնել:

Պաշտօնն ստանձնեց նոր քաղաքապետ գեն. Ռէյնբոտը: Պարապմունքները վերսկսուեցին միջնակարգ դպրոցներում: Նոր դպրոցներում: Նոր կուսակցութիւն կազմուեց «կեդրոնի կուսակցութիւն» անունով: Նրա ծրագիրը բռնում է «Հոկտեմբերի 17-ի միութեան» և սահմանադրական-դեմոկրատական կուսակցութեան մէջ տեղը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Այսօր Ցարսկոյէ Սելոյում Թագաժառանգ-Ցեսարևիչի անուան ատամանեան կազակ գնդի զօրահանդէս եղաւ. Թագաւոր Կայսրը շնորհակալութիւն յայտնեց անձնուէր և ազնիւ ծառայութեան համար, վստահութիւն յայտնեց, որ երիտասարդ կազակները համակուած են Դոնի զօրքերի փառաւոր աւանդութիւններով, յայտարարեց, որ այդմամբ առաջին հարիւրեակին թոյլ է տալիս այսուհետև անուանել «Նորին Մեծութեան հարիւրեակ»:

Սիբիրի երկաթուղու 1905 թ. նոյ. 1-ից մինչև յունուարի 8-ը Ծայրագոյն Արևելքից փոխադրուած է զինուոր 277,322, սպայ—3,576, ձի—1680. Չհաշուելով պահեստի և հանրազօրքի զինուորների տեղական փոխադրութիւնները, պոստային գնացքներով փոխադրուած են ընդամենը 325,000 զինուոր:

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Վանքի աւագ եկեղեցու ծխականները չորեքշաբթի, ամսիս 18-ին, երեկոյեան ժամը 5-ին, երկրորդ անգամ հրաւիրւում են ժողովի, ընտրելու երեք լիազօրներ, որոնք ընտրելու են բոլոր եկեղեցիների ընդհանուր ժողովում չորս պատգամաւոր՝ մասնակցելու փոխարքայի դիւանատան կից գումարուելիք խորհրդակցութեան, որի նպատակն է միջոցներ ձեռնարկել դադարեցնելու հայ-թրքական ընդհարումը:

(101) 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից » 7
Վելեամինովսկայա փողոց № 8:

ՈՐՈՆՈՒՄ ԵՄ

ՀԱՇՈՒԱՊԱՀԻ օգնականի կամ ԳԱՆՁԱՊԱՀԻ ՊԱՇՏՕՆ: Կարող եմ թողնել գրաւական կամ տալ լաւ երաշխաւոր:

Հարցնել «Прогрессъ» մանուֆակտուրային մագազինում՝ Երևանեան հրապարակի վրայ: 10—3

Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
Типографія Т. М. Ротиніанца Голов. пр., д. № 11,